ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՓԵՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 11-րդ փողոցն անվանակոչել հայ նկարչուհի, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Արփենիկ Նալբանդյանի անվամբ՝ «Արփենիկ Նալբանդյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՓԵՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ նկարչուհի, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Արփենիկ Նալբանդյանը ծնվել է 1916 թվականի դեկտեմբերի 23-ին Թբիլիսիում: Նա ՀՀ, ՌԴ ժողովրդական նկարիչ Դմիտրի Նալբանդյանի քույրն է, Էդուարդ Իսաբեկյանի կինը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Իսաբեկյանի մայրը:

1919 թվականին ընտանիքը ստիպված տեղափոխվել է Լենինական, և մայրն աշխատանքի է անցնել տեղի ամերիկյան մանկատանը: Չորս տարի անց Նալբանդյանները վերադարձել են Թիֆլիս: 1932 թվականին Արփենիկը մեկնել է Մոսկվա և ընդունվել տեղի Ճարտարապետական ինստիտուտի նախապատրաստական կուրս, սակայն նյութական սուղ պայմանների պատճառով, ստիպված, վերադարձել է Թիֆլիս: Հետագա երեք տարիներին ապագա նկարչուհին աշխատել է հաստոցաշինական գործարանում որպես գծագրող-ընդօրինակող, միաժամանակ՝ սովորել Թիֆլիսի գեղարվեստի պետական ակադեմիայի նախապատրաստական բաժնում: 1935 թվականին ընդունվել է գեղարվեստի ակադեմիայի գեղանկարչության բաժին, որն ավարտել է 1941 թվականին: 1940 թվականի փետրվարի 19-ին Թբիլիսիում ամուսնացել է Էդոարդ Իսաբեկյանի հետ: 1941 թվականին տեղափոխվել է Երևան՝ մշտական բնակության:

1943 թվականից եղել է Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միության անդամ: 1946 թվականից (հիմնադրման սկզբից) մինչև կյանքի վերջը դասավանդել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում: 1948 թվականին և 1952 թվականին ընտրվել է Քաղխորհրդի պատգամավոր: 1957 թվականին հաստատվել է որպես դոցենտ: 1941 թվականից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների:

Արփենիկ Նալբանդյանը մահացել է 1964 թվականի մայիսի 17-ին Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 11-րդ փողոցն անվանակոչել հայ նկարչուհի, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Արփենիկ Նալբանդյանի անվամբ՝ «Արփենիկ Նալբանդյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ
ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ
ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՓԵՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Արփենիկ Նալբանդյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՓԵՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Արփենիկ Նալբանդյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒՀԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ